ԵՐԿՈՒ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

(ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՓՈՒԼԵՐԸ)

Գրեց՝ ԻՐԱՋԵԿ

Ռուբինեանց անկումով — աւելի ճիշդ՝ Բագրատունեանց անկումով — թէեւ Հայաստանի անկախութիւնը չիջաւ, սակայն անկախութեան գաղափարը շարունակեց ապրել որպէս հայ ժողովրդի, գոնէ նրա գիտակից մասի, ամենէն թանկագին սեփականութիւնը, նրա սրբութիւն սրբոցը:

Եւ այլ կերպ չէր էլ կարող լինել: Քաղաքական անկախութիւնը նախապայմանն է իւրաքանչիւր ժողովրդի քաղաքական ազատութեան, ինչպէս նաեւ բոլոր ազատութիւնների: Մի ժողովուրդ, որ քաղաքականապէս անկախ չէ եւ ինքը չէ իր քաղաքական բախտը տնօրինողը — այդ ժողովուրդն ուրեմն ազատ էլ չէ, թէկուզ ամենալուսաւոր եւ ամենամարդասէր մէկ պետութեան հպատակը լինի նա:

Այստեղից պարզ է, որ ազատութեան տենչը ժողովուրդների մէջ ծնւում է ո՛չ թէ որպէս օդից բռնուած մէկ ցնորք եւ կամ ո՛չ թէ զանազան արտաքին թելադրանքներով, այլ նոյն ժողովրդի կեանքի իրական պայմանների հարկադրութեամբ:

Ուրիշ խօսքով՝ եթէ մի ժողովուրդ ձգտում է ազատութեան եւ նրա համար ամէն զոհողութիւն յանձն է առնում, նշանակում է, որ դա նրա կեանքի պահանջն է, ճիշդ այնպէս, ինչպէս հիւանդը միշտ ձգտում է բժշկութեան:

Գալով մասնաւորապէս հայ ժողովրդին, պիտի ասենք, որ նա, իր անկախութիւնը կորցընելուց յետոյ, դարեր շարունակ եղել է օտար լծերի տակ, տառապել է օտար տիրապետութիւններից, այն էլ մէկը միւսից դաժանաբարոյ, դաժան: Նա շարունակ տանջուել է արեւելեան ստրուկի վատթար վիճակում, մարդկային եւ գոյքային ամենատարրական իրաւունքներից զրկուած:

Բնական է ուրեմն, որ նման պայմաններում, իր բոլոր ուժերով նա ձգտէր ազատագրուելու այդ օտար լծերից, ձգտէր ամենից առաջ իր քաղաքական անկախութիւնը նորից ձեռք բերելու, որովհետեւ քաղաքական անկախութիւնը — ինչպէս ասացինք — առաջին եւ ամենաանհրաժեշտ կայանն է իւրաքանչիւր ժողովրդի կատարեալ ազատութեան — ե՛ւ քաղաքական, ե՛ւ քաղաքացիական, ե՛ւ տնտեսական, ե՛ւ մշակութային:

Ուզում ենք ասել՝ մեր կեանքի իրական պայմանները միշտ էլ եղել են այնպէս, որ նրանք շարունակ մեր ժողովրդին պիտի դրդէին ազատութեան եւ, անկախութեան գաղափարը վառ պիտի պահէին նրա հոգում:

Եւ ճիշդ որ, մեր պատմութիւնը, մանաւանդ ԺԶ. դարից այս կողմ, բազմաթիւ տուեալներով ապացուցանում է, որ անկախութեան երազը շարունակ ապրում է հայ երկնակամարի ներքոյ եւ հայ սրտերում:

Երբեմն-երբեմն նա նոյնիսկ իրականութիւն էլ է դարձել — ինչպէս Դաւիթ Բէկի եւ Հանրապետութեան օրով — բայց եւ դժբախտաբար չուտով չքացել է՝ ինչպէս մի օդերեւոյթ, մի զեղեցիկ պատրանք, դէպի իրեն միշտ յառած պահելով հայութեան դէթ լաւագոյն մասի աչքերը մինչեւ այսօր:

Հետաքրքրական է, թէ հայ քաղաքական միտքը, այդքան դարերի ընթացքում, ի՛նչ փուլեր է անցել կամ ուրիշ խօսքով ասած՝ ի՛նչ միջոցներով է նա փորձել Հայաստանի անկախութեան գաղափարն իրականացնել:

Ցաւօք սրտի, մեր գրականութիւնը թէեւ շատ աղքատ է այդ տեսակէտից, բայց եւ այնպէս եղած մի քանի փաստերով էլ հնարաւոր է որոշակի գծել այն ուղին, որով ընթացել է հայ քաղաքական մտածողութիւնը— սկզբից մինչեւ մեր օրերը:

Ի. ԱՐԵՒՄՏԵԱՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

1.

Հայ քաղաքական մտքի պատմութիւնը — մեր կարծիքով — երեք գլխաւոր փուլեր է ու-